ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

---

**ք. Ծաղկաձոր**

**17/02/2023**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ասատրյանը, Հմայակ Խաչատրյանը, Նարեկ Հարությունյանը, Գոհար Հովհաննիսյանը, Գրիգոր Ղարիբյանը, Արթուր Մելոյանը, Նունիկ Ստեփանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ իրավաբանական քարտուղարության անձնակազմի կառավարման բաժնի պետ Լեյլի Խաչատրյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Նարինե Խաչատրյանը:**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ոսկան Եղիազարյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գարիկ Բադալյանը**

Լսեցին
***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի 2023 թվականի փետրվարի 17-ի թիվ 3 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 221-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 206 և 2023 թվականի փետրվարի 07-ի թիվ 11 որոշումերն ուժը կորցրած ճանաչելու մասին:

3. Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 209 որոշման 6-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին:

4. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 20/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 221-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ավագանին որոշում է.

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի <<Ծաղկաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> թիվ 221-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված <<5113>> (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) <<0.0>> թիվը փոխարինել <<3000.0>> թվով:

2) Բաժին 6 խումբ 6 դաս 1 (Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)) հոդված <<5134>> (Նախագծահետազոտական ծախսեր) <<0.0>> թիվը փոխարինել <<300.0>> թվով:

3) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<4111>> (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) <<0.0>> թիվը փոխարինել <<3393.8>> թվով:

4) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<4511>> (Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին) <<31600.0>> թիվը փոխարինել <<28206.2>> թվով:

5) Բաժին 8 խումբ 2 դաս 3 (Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ) հոդված <<5113>> (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) <<20000.0>> թիվը փոխարինել <<24200.0>> թվով:

6) Բաժին 8 խումբ 6 դաս 1 (Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)) հոդված <<5112>> (Շենքերի և շինությունների կառուցում) <<42000.0>> թիվը փոխարինել <<34500.0>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 21-Ն/

Լսեցին
***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 206 ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 07-Ի ԹԻՎ 11 ՈՐՈՇՈՒՄԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝ ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի <<Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպություն վերակազմակերպելու և կանոնադրությունը հաստատելու մասին>> թիվ 206 որոշումը:

2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 07-ի <<Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը հաստատելու մասին>> թիվ 11 որոշումը:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 22/

Լսեցին
***<<ՄԵՂՐԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 209 ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի <<Ծաղկաձոր համայնքի նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատակիցների 2023 թվականի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 209 որոշման 6-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից ըև տարածվում է 2023 թվականի հունվարի 01-ից ծագող իրավահարաբերությունների վրա:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 23/

Լսեցին

***ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 6-րդ, 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Անահիտ Արշավիրի Սարգսյանի լիազոր ներկայացուցիչ Արշավիր Սարգսյանի և Ալեքսանդր Սերգեյի Ոստոմյանի համատեղ դիմումը՝ ավագանին որոշում է.

1. Անահիտ Արշավիրի Սարգսյանին և Ալեքսանդր Սերգեյի Ոստոմյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրենց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 32 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0008-0319/ 0.574 հա մակերեսով բնակավայրերի, հատուկ պահպանվող, բնակելի և հասարակական կառուցապատման, հանգստի, այլ հողերի համար նախատեսված հողամասին կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Մայիսյան փողոց, թիվ 34/2 հասցեում գտնվող 0.206 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող, բնակավայրերի, հանգստի, բնակելի կառուցապատման համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 33 323 796 (երեսուներեք միլիոն երեք հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24/

Ավագանու անդամներ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՀՈՎԻԿ ԳՈԳՈԼՅԱՆ

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՅՈՒՐԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ

*Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ*

ՈՍԿԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ__________________

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РА КОТАЙКСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ЦАХКАДЗОР
RA KOTAYK REGION TSAGHKADZOR MUNICIPALITY
03027029

*Նիստն արձանագրեց՝* Գարիկ Բաղալյանը

________________________________